

գիտուի որ Ս. Տեղեաց պաշտամունքն և արարողութիւնները ճշգորէն կը յարմարին Գ. դարու ուխտաւորուհի Էթէրիայի Ս. Տեղեաց «Ուղեգրութեան» բովանդակութեան հետ (Հրատ. 1888ին, այլևայլ լեզուաց թարգմանութեամբ): Փարիզի Սաղիմեան ճաշոցը Ս. Աստուածածնի Հայոց վանքի նկատմամբ ունի հետեւեալ ծանօթութիւնը (Rit. Arm. էջ 526), զոր կը թարգմանեմ բառ առ բառ. «Օգստ. 15. Տօն Մարիամու Աստուածածինի: Յերրորդում մղոնի Բեթղեհէմի. այս կանոն կատարի. Սաղմ. ձԼԲ. 8. Եսայի. է. 10—15. Գաղ. Գ. 29. Գ. 7. Սաղմ. ՃԺ. Ղուկ. Բ. 1—7»: Ինչպէս կանխաւ գրեցինք, Երուսաղէմէն մինչև Բեթղեհէմ վեց հոռովէական մղոն էր. երրորդ մղոնին, Բեթղեհէմի ճամբուն վրայ շինուած էր Հայոց Ս. Աստուածածնի վանքը, ուր, հին դարերէ սկսեալ, համաձայն այս ձեռագիր ճաշոցին, Օգստ. 15ին կը կատարուէր Ս. Աստուածածնի տօնը: Երուսաղէմի մէջ կանոն էր, և է ցայժմ, որ մէն մի տօն կը կատարուէր իր պատկանեալ եկեղեցոյն մէջ: Ճաշոցին այս ծանօթութիւնը, սակայն, մեր առջև դժուարութիւն մը կը հանէ. քանի որ հին դարերէ սկսեալ, Օգստ. 15ին կը կատարուէր Ս. Աստուածածնի տօնը Գեթսեմանիի Տիրամօր տաճարին մէջ, ուր կար դամբարանը, և պատմականօրէն և աւանդութեամբ կը հաստատուի այս պարագան. Գեթսեմանիի Ս. Աստուածածին եկեղեցին Գ. դարուն զոյութիւն ունէր արդէն, ինչպէս կը յիշէ Էթէրիա ուխտաւորուհին իր «Ուղեգրութեան» մէջ (Թարգմ. էջ 71), և կ'անուանէ զայն «գեղազարդ եկեղեցի». և Օգոստ. 15ի Ս. Աստուածածնի Տօնը հո՛ն կը կատարուէր, որուն համար ունինք անհերքելի վկայութիւններ. Մօրիկ կայսեր (582—602) հրամանագիրը այս տօնին հաստատման մասին՝ պարզապէս Ս. Աստուածածնի տօնին՝ կայսրութեան բոլոր սահմաններուն մէջ տարածելու ձեռնարկ մ'էր, զի նոյն տօնն արդէն նախապէս հաստատուած էր Ս. Երկրին մէջ: Ինչպէս այս պատմական տեղեկութիւնները, նոյնպէս մինչև ցայսօր Ս. Աստուածածնի տօնին առթիւ տեղի ունեցած տեղական սովորութիւնները կը հակասեն վերոգրեալ ձեռագրին ծանօթագրութեան: Բարեբախտաբար. «Երուսաղեմայ Տօնակարգ» խորագրով, ԺԱ.—ԺԲ դարու վրացական ձեռագիրի մը հրատարակութիւնը, 1923ին, Գերման գիտնական Բրօֆ. Goussenի միջոցաւ, այդ դժուարութիւնը գըլ-